# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայաստանում Ռազմավարական էկոլոգիական գնահատման գործնական կիրառման (մեկտեղում և նախնական վերլուծություն) և նախնական խորհրդատվական հանդիպման ուսուցողական աշխատաժողով

09 – 10 մարտ, 2016 Երևան, Անի Պլազա հյուրանոց

*Հայաստանում գրանցվել է քայքայված հողերի 640 հատված՝ 7530 հա ընդհանուր տարածքով, որից 3780-ը մինչև քայքայումը հանդիսանում էին գյուղատնտեսական հողատարածքներ: Ընդհանուր առմամբ, հանրապետության 81.9%-ը կամ 24.353 կմ² ենթարկված է տարբեր աստիճանի անապատացման: Հարկ է նշել, որ հանրապետության հողերի 50%-ը էրոզացված է, մոտ 60%-ում արտահայտված են սողանքային և սելավային երևույթները, 40%-ը քարքարոտ տարածքներ են, աղակալած հողերը կազմում են մոտ 30.0 հազ.հա, տեխնածին աղտոտված հողերը՝ 90 հազ.-ից ավելի:*

# Բնահողային գոտիները և հողատիպերը*

| Գոտիները | Մարզերը | Հողերի տիպերը | Տարածքը | | Բարձրությունը ծ.մ. (մ) |
|---|---|---|---|---|---|
| | | | Հազ.հա | % | |
| Կիսաանապատային | Արագածոտն, Արարատ, Արմավիր, Կոտայք, Երևան | 1.Կիսաանապատային գորշ<br>2.Ոռոգելի մարգագետնային գորշ<br>3.Պալեոհիդրոմորֆ կապակցված ալկալիացած<br>4.Աղուտ-ալկալի | 152<br>53<br>2<br>29 | 5.8<br>2.0<br>0.1<br>1.1 | 850-1250 |
| | | Ընդամենը | 236 | 9.0 | |
| Չոր տափաստանային | Արագածոտն, Արարատ, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր | Շագանակագույն | 242 | 9.2 | 1250-1900 |
| Տափաստանային | Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր, Շիրակ | Սևահող<br>Մարգագետնա-սևահողային<br>Գետահովտա-դարավանդային<br>Հողագրունտներ | 718<br>13<br>48<br>18 | 27.4<br>0.5<br>1.8<br>0.7 | 1300-2450 |
| | | Ընդամենը | 797 | 30.4 | |
| Անտառային | Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ | Անտառային գորշ<br>Ճմակարբոնատային<br>Դարչնագույն | 133<br>15<br>564 | 5.2<br>0.6<br>21.6 | 500-2400 |
| | | Ընդամենը | 712 | 27.4 | |
| Լեռնա-մարգագետնային | Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ | Լեռնամարգագետնային<br>Մարգագետնա-տափաստանային | 346<br>283 | 13.2<br>10.8 | 2200-4000 |
| | | Ընդամենը | 629 | 24.0 | |
| **Ընդամենը** | | | **2616** | **100** | |

**** 358.3 հազար հա՝ արմատական ապարների ելքեր են, ավազներ, ջրեր, ճանապարհներ և շինություններ:***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԸ



# Հայաստանի հողային ռեսուրսները, հազ. հա

| | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր հողային տարածքը, այդ թվում՝ | 2974.3 | 2974.3 | 2974.3 | 2974.3 | 2974.3 | 2974.3 | 2974.3 | 2974.3 | 2974.3 | 2974.3 | 2974.3 | 100 |
| գյուղատնտեսական նշանակության հողեր | 2135.3 | 2129.6 | 2122.1 | 2121.2 | 2120.3 | 2100.9 | 2076.9 | 2052.4 | 2051.0 | 2049.4 | 2045.7 | 68.8 |
| բնակավայրերի հողեր | 133.9 | 150.5 | 151.0 | 151.2 | 151.6 | 152.0 | 152.2 | 151.6 | 151.7 | 151.8 | 151.8 | 5.1 |
| արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր | 20.9 | 28.1 | 28.2 | 29.2 | 29.4 | 31.8 | 33.0 | 33.6 | 34.9 | 36.4 | 36.5 | 1.2 |
| էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր | 9.1 | 11.9 | 12.1 | 12.2 | 12.4 | 12.5 | 12.8 | 12.5 | 12.6 | 12.6 | 12.6 | 0.4 |
| հատուկ պահպանվող տարածքների հողեր | 187.8 | 220.6 | 229.3 | 229.7 | 229.9 | 249.4 | 298.0 | 331.9 | 331.7 | 331.7 | 335.4 | 11.3 |
| հատուկ նշանակության հողեր | 29.5 | 31.6 | 31.7 | 31.7 | 31.7 | 31.6 | 31.7 | 31.6 | 31.6 | 31.6 | 31.6 | 1.1 |
| անտառային հողեր | 398.0 | 373.0 | 370.6 | 369.8 | 369.8 | 369.1 | 343.1 | 334.2 | 334.3 | 334.3 | 334.2 | 11.2 |
| ջրային հողեր | 22.1 | 28.3 | 28.6 | 28.6 | 28.6 | 26.4 | 26.0 | 25.9 | 25.9 | 25.9 | 25.9 | 0.9 |
| պահուստային հողեր | 37.7 | 0.7 | 0.7 | 0.7 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.0 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՍՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի հողերի դեգրադացմանը նպաստող կարևոր մարդածին գործոններից է հողերի աղտոտումը, որի հիմնական աղբյուրներն են՝

- հանքարդյունաբերությունը,
- էներգետիկան,
- գյուղատնտեսության քիմիացումը,
- քիմիական արդյունաբերությունը,
- ավտոտրանսպորտը:

## Ծանր մետաղների պարունակությունը և կուտակման դինամիկան տեխնածին աղտոտված հողերում (0-20սմ)

| Աղտոտվածության աստիճանը | 1980 | | | | 1985 | | | | 2005 | | | | 2015 | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Cu | Pb | Mo | Zn | Cu | Pb | Mo | Zn | Cu | Pb | Mo | Zn | Cu | Pb | Mo | Zn |
| Խիստ | 2436 | 1094 | 80 | 1216 | 2465 | 1108 | 86 | 1398 | 2497 | 1130 | 89 | 1400 | 2411 | 1143.2 | 93.2 | 1436 |
| Միջին | 213 | 179.8 | 5.7 | 728 | 217 | 184 | 6.4 | 765 | 221.6 | 187 | 7.2 | 724 | 224.5 | 190 | 7.7 | 796 |
| Թույլ | 90.4 | 31.8 | 2.3 | 96.2 | 92 | 33.5 | 2.4 | 96.4 | 93 | 34.5 | 2.4 | 90 | 93.8 | 32.6 | 2.6 | 94 |
| Չաղտոտված | 72 | 30.5 | 2.4 | 65.1 | 67.2 | 27.9 | 2.1 | 66.3 | 65.1 | 316 | 2.2 | 70 | 72.4 | 31 | 2.1 | 72 |

# ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ՀՀ օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում հաշվառված է 54 տեսակի հաստատված պաշարներով պինդ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր, այդ թվում՝ 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթահանքային և 1 ալյումինահանքային հանքավայր:

Բացի գնահատված և Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերից, ՀՀ տարածքում հայտնաբերված են տարբեր մետաղների 115 երևակումներ:

Հայաստանն ունի ոչ մետաղական օգտակար հանածոների զգալի պաշարներ, մասնավորապես՝ տուֆեր, տրավերտիններ, բազալտներ, գրանիտներ, պեռլիտներ, պեմզաներ, ցեոլիտներ, բենտոնիտներ, այլ գունագեղ, շինարարական քարեր, հանքային կլանիչներ: Հանրապետության հիմնական հանքագործական շրջաններն են Սյունիքը և Լոռին:

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ և ԲԱՇԽՈՒՄԸ*

| | Ընդամենը հողեր | արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր | ընդերքօգտագործման հողեր |
|---|---|---|---|
| 2014 | | | |
| Արագածոտն | 275632.1 | 2444.7 | 849.1 |
| Արարատ | 209003.0 | 3037.6 | 305.8 |
| Արմավիր | 124210.9 | 2874.9 | 656.5 |
| Գեղարքունիք | 534916.8 | 3670.1 | 1271.3 |
| Լոռի | 379864.5 | 3718.9 | 677.2 |
| Կոտայք | 208552.9 | 3423.2 | 681.9 |
| Շիրակ | 268027.0 | 3894.6 | 1690.1 |
| Սյունիք | 450541.8 | 7053.5 | 5220.6 |
| Վայոց Ձոր | 230783.0 | 1998.3 | 1635.0 |
| Տավուշ | 270399.0 | 1153.5 | 347.3 |
| Երևան | 22328.0 | 3114.1 | 132.2 |
| Ընդամենը | 2974259.4 | 36383.3 | 13466.9 |
| 2015 | | | |
| Արագածոտն | 275632.1 | 2444.6 | 849.1 |
| Արարատ | 209003.2 | 3037.5 | 305.8 |
| Արմավիր | 124211.4 | 2877.8 | 656.5 |
| Գեղարքունիք | 534916.8 | 3675.0 | 1271.3 |
| Լոռի | 379864.5 | 3937.9 | 739.7 |
| Կոտայք | 208553.2 | 3426.1 | 684.2 |
| Շիրակ | 268027.0 | 3889.4 | 1691.1 |
| Սյունիք | 450541.8 | 7059.0 | 5220.6 |
| Վայոց Ձոր | 230783.0 | 2000.8 | 1635.0 |
| Տավուշ | 270399.0 | 1154.2 | 347.2 |
| Երևան | 22328.1 | 3114.2 | 132.2 |
| Ընդամենը | 2974259.4 | 36616.6 | 13532.7 |

Միայն 2013-2015թթ-ին ընդերքօգտագործման հողերն ավելացել են 17%-ով:

- Հանրապետությունում գործող միայն մետաղական հանքավայրերի մակերեսը կազմում է մոտ 4700 հա: Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակով հատկացված է ավելի քան 250 հազ.հա մակերեսով հողատարածք:

- Հանրապետությունում առկա են 22 գործող և կոնսերվացված պոչամբարներ, որոնց գումարային ծավալային տարողունակությունը կազմում է մոտ 600 մլն. մ$^3$, իսկ զբաղեցրած մակերեսը՝ ավելի քան 700 հա (այդ թվում՝ Թեղուտի հանքի պոչամբարը): ՀՀ բոլոր պոչամբարների պոչերը թաց տեսակի են, իսկ պոչամբարների մեծամասնությունը նախագծվել և կառուցվել է ԽՍՀՄ տարիներին՝ չունենալով ջրի փակ շրջանառություն և չպարունակելով պոչերի անվտանգ պահպանման նորագույն տեխնոլոգիաներ (ջրամերժ թաղանթապատում, գազահեռացում և այլն):

- Հողերի աղտոտման տեխնածին աղբյուրների (Ալավերդու լեռնամետալուրգիական գործարան, Ագարակի հարստացուցիչ ֆաբրիկա) հարակից տարածքներում ձևավորվել են տեխնածին անապատներ (ընդհանուր մակերեսով՝ 200-250 հա):

- Շրջակա միջավայր արտանետված տեխնածին աղտոտիչները բացասաբար են անդրադառնում հողերի ագրոքիմիական, ֆիզիկաքիմիական, ֆիզիկական ցուցանիշների վրա:

- Տեխնածին աղտոտված հողերում հումուսի պարունակությունը հողի վերին շերտում (0-20սմ) ստուգիչի նկատմամբ նվազել է 2.5-3.8, կալցիումը՝ 2.8-2.3, մագնեզիումը՝ 2.0-2.8, նատրիումը՝ 1.3-1.5 անգամ: Ընդհանուր և շարժուն ազոտը նվազել է՝ 1.6-1.9 և 2.8-2.4, ֆոսֆորը՝ 1.6-2.7 և 1.4-3.2, կալիումը՝ 1.4-1.2 և 1.5-1.9 անգամ:

# ԵՐԱՇՏՆԵՐ

- Հայաստանի տարածքի 7233 կմ$^2$ (24.3 %) գտնվում է անապատացման ռիսկի գոտում, 14519 կմ$^2$ (48.8 %) տարածքը (Լոռու և Տավուշի մարզերում) անապատացվում է, միայն տարածքի 6742 կմ2 (22.6 %)-ի վրա առայժմ անապատացման պրոցեսներն արտահայտված չեն:




**Նկար 3: Անապատացման ռիսկի գոտին Հայաստանում**


361,86
533,194
448,303
56,343
11386,216
444,66
807,899
2
4
6
8
10
12

# ՍՈՂԱՆՔՆԵՐ

Հայաստանում սողանքների ակտիվացման հիմնական պատճառներ են՝

- Ջրերի կառավարման և ոռոգման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպումը,
- Անտառհատումները:

Հայաստանում սողանքների տարածման հիմնական շրջաններն են՝

- Եղեգիս, Ազատ և Վեդի գետերի հովիտները,
- Սևանա լճի հյուսիս-արևելյան ափը,
- Իջևան քաղաքի շրջակայքը
- և հանրապետության այլ վայրեր:

Սողանքային երևույթները ընդգրկում են շուրջ 1216 կմ$^2$ մակերես (հանրապետության տարածքի շուրջ 4.1 %), սակայն համաձայն Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) ուսումնասիրությունների ՀՀ բնակչության 15%-ը (մոտ 470,000 մարդ) ապրում է սողանքավտանգ տարածքներում, իսկ սողանքային աղետի կառավարմանն ուղղված ՃՄՀԳ հետազոտության (2004-2006թթ.) արդյունքում հաշվառվել է 2,504 սողանք, զբաղեցնելով հանրապետության տարածքի 8%-ը:


N
W
E
S
Պայմանական նշաններ
2հա-ից փոքր սողանքներ
2հա-ից մեծ սողանքներ
Ճանապարհներ
Լճեր, շրջային տարածքներ
Մարզերի սահման
km
0 10 20 40 60 80 100
1
2
3
4
5
6
7
8
9
10
11

# ՀՀ սողանքային երևույթների տարածումն ըստ մարզերի

| Մարզ | Տարածքի մակերես, կմ² | Սողանքների թիվը | Սողանքների ընդհանուր մակերեսը, կմ² | Սողանքների հարաբերական մակերեսը, % |
|---|---|---|---|---|
| Արագածոտն | 2763.4 | 19 | 75.5 | 3 |
| Արմավիր | 1191.6 | 0 | 0.0 | 0 |
| Երևան | 222.3 | 152 | 13.0 | 6 |
| Կոտայք | 2034.0 | 110 | 77.8 | 4 |
| Տավուշ | 2740.7 | 151 | 210.6 | 8 |
| Շիրակ | 2682.6 | 23 | 20.6 | 1 |
| Արարատ | 2090.2 | 142 | 143.9 | 7 |
| Գեղարքունիք | 5369.6 | 126 | 202.8 | 4 |
| Լոռի | 3852.0 | 217 | 234.8 | 6 |
| Սյունիք | 4492.2 | 289 | 246.7 | 5 |
| Վայոց Ձոր | 2287.9 | 184 | 242.4 | 11 |

# Սելավներ

- Հայաստանում սելավներն ինտենսիվ արտահայտված են միջին բարձրության լեռնային գոտում, որը զբաղեցնում է հանրապետության տարածքի կեսից ավելին:

- Սելավների ակտիվացումը պայմանավորված է թեք լանջերին մերկացած և հողմնահարված նյութի առկայությամբ և առատ մթնոլորտային տեղումներով:

- Սելավներից պարբերաբար տուժում են Երևանը, Վանաձորը, Գյումրին, Կապանը, Գորիսը, Ալավերդին և մի շարք այլ բնակավայրեր, գյուղական համայնքներ, երկաթուղիներ և ավտոճանապարհներ:

# Սելավներ շրջաններն ըստ մարզերի

| Մարզ | Տարածքի մակերես, կմ² | Սելավաբեր շրջանների թիվը | Սելավաբեր շրջանների մակերեսը, կմ² | Սելավների հարաբերական մակերեսը, % |
|---|---|---|---|---|
| Արագածոտն | 2763.37 | 8 | 1441.3 | 52 |
| Արմավիր | 1191.6 | 0 | 0.0 | 0 |
| Երևան | 222.3 | 0 | 0.0 | 0 |
| Կոտայք | 2034.0 | 7 | 867.3 | 43 |
| Տավուշ | 2740.7 | 8 | 2147.0 | 78 |
| Շիրակ | 2682.6 | 8 | 1102.3 | 41 |
| Արարատ | 2090.2 | 6 | 1033.6 | 49 |
| Գեղարքունիք | 5369.6 | 10 | 1551.4 | 29 |
| Լոռի | 3852.0 | 17 | 2494.6 | 65 |
| Սյունիք | 4492.2 | 13 | 3153.9 | 70 |
| Վայոց Ձոր | 2287.9 | 10 | 2277.3 | 100 |




Նկար 7: Հայաստանի սելավային գոտիներն ըստ երևույթի կրկնման

## ՀՈՂԵՐԻ ԱՂԱԿԱԼՈՒՄ

Հանրապետությունում հողերի բնական աղակալումը տարածված է հարթավայրերի ցածրադիր տարածքներում, ուր ստորգետնյա ջրերի մակարդակը մոտ է երկրի մակերևույթին: Տարբեր մասնագիտական գնահատականներով դրանց ընդհանուր մակերեսը կազմում է 28-40 հազ.հա: Սակայն ազգային զեկույցներում չափագրված է մոտ 30 հազ.հա աղակալած հողեր՝ հիմնականում Արմավիրի և Արարատի մարզերում: Նշենք, որ նախկինում մելյորացվել էր մոտ 5400 հա աղուտ-ալկալիական հողեր, սակայն դրենաժային համակարգի փակված լինելու արդյունքում Արարատյան դաշտավայրի հողերի աղակալումը շարունակվում է:

# ԹԱՓՈՆՆԵՐ

Հայաստանում թափոններն առաջանում են հիմնականում արտադրությունում, որի մեծամասնությունը կազմում են ընդերքօգտագործման թափոնները՝ դատարկ ապարների լցակույտերի և պոչամբարներում կուտակված ապարախյուսի տեսքով և կենցաղում՝ կոշտ կենցաղային թափոնների տեսքով (ԿԿԹ):

**Արտադրական վնասակար թափոնների առաջացումը, օգտագործումը և վնասազերծումը, հազ. տոննա**

| Տարիներ | Առաջացել է | Օգտագործվել է | Վնասազերծվել է |
|---|---|---|---|
| **2005** | 10899.1 | 0.8 | 2.5 |
| **2006** | 12069.0 | 0.8 | 2.3 |
| **2007** | 13346.0 | 2.5 | 2.5 |
| **2008** | 11455.4 | 2.4 | 1.5 |
| **2009** | 14766.1 | 2.4 | 0.5 |
| **2010** | 23307.8 | 159.9 | 0.3 |
| **2011** | 27609.0 | 134.0 | 0.02 |
| **2012** | 39030.9 | 9.1 | 0.2 |
| **2013** | 49332.1 | 5.9 | 4.3 |
| **2014** | 46511.9 | 9.1 | 8.7 |

- Հանրապետության պոչամբարներում ներկայումս ապարախյուսի տեսքով տեղադրված է ավելի քան 300 մլն. տոննա հանքահարստացման պոչեր, որոնց ծավալը ավելանում է տարեկան մոտ 20 մլն. տոննայով: Միևնույն ժամանակ դրանց տարեկան արտադրությունն ավելի կավելանա Թեղուտի հանքի նախագծային հզորության հասնելու, ինչպես նաև այլ հանքերի շահագործման հանձնման արդյունքում:

- Արդի վիճակը կարելի է գնահատել իբրև աղետալի, քանի որ ներկայումս ընդերքօգտագործման բնագավառում չկան թափոնների կամ դրանցից առաջացող վնասի նվազեցման գործուն մեխանիզմներ և չեն խրախուսվում լավագույն հասանելի տեխնոլոգիաների (BAT) և բնապահպանական լավագույն փորձի (BEP) կիրառումը: Թերևս բացառություն է 2000-ական թթ-ին Արարատի ոսկու պոչամբարի պոչերի վերամշակումը AGRC կազմակերպության կողմից, որին տրվել էին որոշակի հարկային արտոնություններ:

# ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐ(ԿԿԹ)

- Ըստ վիճակագրական հաշվառման տվյալների, ՀՀ տարածքում տարեկան առաջանում և աղբավայրեր են տեղափոխվում շուրջ 1529 հազ. մ$^3$ կամ 535,2 հազ տոննա, որի 57.0 %-ը (868.0 մ$^3$) բաժին է ընկնում Երևանին:
- Թափոնների կառավարման բնագավառում առկա են վերահսկման որոշակի խնդիրներ, մասնավորապես հանրապետությունում գործում են պաշտոնապես գրանցված 245 աղբավայրեր՝ զբաղեցնելով 1344 հա մակերես, որոնցից թափոնների հեռացման վայրերի ռեեստրում գրանցված են 19-ը:
- Համաձայն ոչ պաշտոնական տվյալների հանրապետությունում առկա է մոտ 200 ապօրինի աղբավայր և աղբանոց, որոնք զբաղեցնում են շուրջ 170 հա մակերես:

- Հայաստանի տարածքում ԿԿԹ հավաքումն իրականացվում է 48 քաղաքային և 468 գյուղական համայնքներում, իսկ 398 գյուղական համայնքներ (գյուղական բնակավայրերի 46%-ը) ընդգրկված չեն թափոնների հավաքման ծառայությունում: Քաղաքային աղբավայրերի ընդհանուր տարածքը կազմում է 219 հա: Խոշոր աղբավայրերը գտնվում են Երևանում (ունի 52.3 հա մակերես, որտեղ կուտակված է մոտ 8 մլն. տոննա աղբ), Վանաձորում (13 հա), Գյումրիում (10 հա), Արմավիրում (8 հա), Էջմիածնում (7 հա) և Հրազդանում (6 հա):
- Առկա են ՀՀ Կառավարության համապատասխան որոշումների խախտումներ, կապված աղբավայրերի տեղադրման մակերեսների, դրանց թաղման, վնասազերծման և ոչնչացման հետ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ